Հոդվածի հղումը. Փախլյան Ա., Նազարյան Ա., Զեյնալյան Լ. (2025), Թուրքական ծագման ապրանքների ներկրումը ՀՀ ժամանակավոր արգելքից առաջ և հետո, *Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ,* 2(8), 143-167,
DOI: 10.52174/29538114_2025.2-143
Ներկայացվել է խմբագրություն՝ 11.09.2025 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 16.10.2025 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 29.12.2025 թ.

ԱՆՆԱ ՓԱԽԼՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ-գիտաշխատող,
բիզնես վարչարարության ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու,
https://orcid.org/0000-0002-5854-2473

ԱՍՏՂԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ
ՀՊՏՀ կիրառական ֆինանսների ամբիոնի մագիստրանտ
https://orcid.org/0009-0006-5403-6764

ԼԻԼԻԹ ԶԵՅՆԱԼՅԱՆ
ՀՊՏՀ կիրառական ֆինանսների ամբիոնի մագիստրանտ
https://orcid.org/0009-0004-0331-6059

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ ՀՀ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐԳԵԼՔԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ

Հայ-թուրքական առևտրային հարաբերությունները ձևավորվել են քաղաքական լարվածության, տարածաշրջանային զարգացումների և տնտեսական շահերի բարդ համադրության ազդեցության ներքո:

Չնայած 1990-ական թվականներից ի վեր պաշտոնական դիվանագիտական կապերի բացակայությանը՝ Հայաստանի և Թուրքիայի միջև առևտուրը մշտական բնույթ է կրել՝ օժանդակվելով հարևան երկրների միջնորդությամբ:

Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի ահաբեկչական գործողություններին Թուրքիայի բացահայտ աջակցությանը հակազդելու և նրանց պետական գանձարանի ֆինանսական սնուցման դադարեցման հիմնավորմամբ՝ ՀՀ Կառավարությունը 2020 թ. հոկտեմբերի 20-ի թիվ 1708-Ն որոշմամբ ժամանակավոր արգելք սահմանեց թուրքական ծագում ունեցող որոշ ապրանքների ներմուծման նկատմամբ: Ի սկզբանե վեց ամիս տևողությամբ սահմանված ներմուծման արգելքը մեկ անգամ երկարաձգվելուց հետո ի վերջո չեղարկվեց՝ փաստացիորեն ընդգրկելով ամբողջ 2021 թվականը: Թեև ներմուծման ժամանակավոր արգելքի կիրառմամբ թուրքական ծագման ապրանքների ներհոսքը Հայաստանի Հանրապետություն կրճատվեց 68.5%-ով, չեղարկումից հետո կարճ ժամանակում ներմուծման ծավալները վերականգնվեցին

նախորդ երեք տասնամյակի ամենաբարձր ցուցանիշները գերազանցող ծավալներով և շարունակական աճի միտումներով:

Հոդվածում ուսումնասիրվել են ժամանակավոր արգելքի կիրառման պայմաններում Թուրքիայից ներմուծման ծավալների փոփոխություններն ինչպես ընդհանրացված ցուցանիշների, այնպես էլ տասը խոշոր ապրանքախմբերի կտրվածքով, իրականացվել է թուրքական ծագման ապրանքների նկատմամբ ներմուծման ժամանակավոր արգելքի հետևանքների PESTEL վերլուծություն:

Հիմնաբառեր. *հայ-թուրքական հարաբերություններ, արտաքին առևտուր, ներմուծում, թուրքական ծագման ապրանքներ, ժամանակավոր արգելք, առևտրային խոչընդոտ*

JEL: D24, F14
DOI: 10.52174/29538114_2025.2-143

Ներածություն: Հայաստան - Թուրքիա հարաբերությունների կարգավորումը մշտապես եղել է Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգի առաջնային հարցերից մեկը: Մինչև 2020 թվականի 44-օրյա պատերազմը այս գործընթացում Հայաստանի հիմնական նպատակը հայ-թուրքական հարաբերությունները հայ-ադրբեջանական հարաբերություններից տարանջատելն էր, մինչդեռ Թուրքիայի դիրքորոշումն այդ հարցում մշտապես էականորեն տարբերվել է. վերջինս հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը հնարավոր էր համարում բացառապես հայ-ադրբեջանական բանակցություններում շոշափելի առաջընթաց արձանագրվելու դեպքում:

Վերջին տարիների զարգացումները ձևավորեցին մի իրավիճակ, երբ Արցախը զրկվեց հայ-ադրբեջանական հարաբերություններում «կռվախնձորի» կարգավիճակից՝ միաժամանակ դադարելով հայ-թուրքական հարաբերություններում ազդեցիկ գործոն լինելուց: Ուստիև, ստեղծված իրավիճակում հայ-թուրքական առևտրային հարաբերությունների շարժընթացն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում:

Առևտրային պատերազմները, միմյանց հանդեպ սակագնային և ոչ սակագնային արգելքների կիրառումը նոր երևույթ չեն հակամարտող երկրների համար: Պաշտոնապես «գոյություն չունեցող» հայ-թուրքական առևտրի նկատմամբ 2020 թվականին ՀՀ նախաձեռնությամբ ներմուծման ժամանակավոր արգելքի կիրառումը տարածաշրջանում քաղաքականության և տնտեսության փոխկապվածության յուրօրինակ դրսևորում էր:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 1708-Ն որոշման[1]՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ից սահմանափակվել էր թուրքական ծագման վերջնական սպառման ապրանքների ներմուծումը: Դա հնարավորություն է տվել որոշակի ժամանակահատվածում զգալիորեն կրճատելու դրամական հոսքերի ծավալները դեպի Թուրքիա: Արգելքի վեցամսյա ժամկետի ավարտին սահմանափակումը երկարաձգվեց ևս վեց ամսով[2]՝ միայն

---

[1] Տե՛ս ՀՀ Կառավարության 2020 թ. հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին» N 1708-Ն որոշումը, https://www.arlis.am/hy/acts/149696

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման

մասնակիորեն կատարելով իր գործառույթը: Ըստ էության, թուրքական ծագման ապրանքները շարունակում էին այլընտրանքային ուղիներով ներմուծվել Հայաստան: Որոշումը մի քանի անգամ փոփոխությունների է ենթարկվել, որի շրջանակներում որոշ բացառություններ են ավելացվել: Արգելքի մեղմացումների արդյունքում թույլատրվել է պատրաստի ապրանք համարվող և փոխարինող տարբերակներ չունեցող որոշ ապրանքատեսակների ներմուծումը: 2022 թվականի հունվարի 1–ից, տնտեսավարողների ջանքերի արդյունքում, արգելքը վերջնականապես դադարեց գործելուց. վերականգնվեց դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում թուրքական ծագման ապրանքների ազատ ներմուծումը Հայաստան: Հետազոտության նպատակն է բացահայտել թուրքական արտադրանքի ներմուծման ծավալների փոփոխման դինամիկան արգելքի կիրառումից առաջ և հետո:

Գրականության ակնարկ: Հայ-թուրքական հարաբերությունները, դրանց պատմական, քաղաքական, դիվանագիտական և տնտեսական հարթությունները մշտապես եղել են գիտական հանրույթի ուշադրության կիզակետում: Տարբեր աղբյուրների վկայակոչմամբ՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գլխավոր խոչընդոտներից են եղել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը[3, 4], Հայկական սփյուռքի գործոնը, հայկական պատմական տարածքների զավթումը[5], Լեռնային Ղարաբաղի (այն ժամանակ դեռևս չլուծված) հակամարտությունը[6], երրորդ երկրի (Ադրբեջանի) շահերից ելնելով՝ սահմանի փակումը[7] և այլն:

Հաշվի առնելով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների լարված ու հակասական բնույթը՝ նույնիսկ գիտական գրականության մեջ հազվադեպ են հանդիպում քաղաքական կամ այլ հանգամանքներից անդին՝ զուտ տնտեսական բնույթի ուսումնասիրություններ:

Որոշ ուսումնասիրություններ փաստում են, որ առևտուրը և առևտրային քաղաքականությունը կարող են մեծապես ազդել հակամարտության ռիսկի վրա: Համաշխարհային բանկի հետազոտությունները ցույց են տվել, որ հարևան երկրների հետ առևտրի խթանումը նվազեցնում է հակամարտության

ժամանակավոր արգելքի մասին», 1048-Ն որոշումը, https://www.e-gov.am/gov-decrees/item/36446/

[3] Տե՛ս **Դարբինյան Հ.** (2024), Հանրային դիվանագիտության և փափուկ ուժի դրսևորումները հայ-թուրքական հարաբերություններում: *Արևելագիտության հանդես*, 25(1), 216–230, https://doi.org/10.46991/jos.2024.25.1.216

[4] Տե՛ս **Gunter M., Rochtus D.** (2010), Special Report: The Turkish-Armenian Rapprochement. Middle East Critique, 19(2), էջ 157–172, https://doi.org/10.1080/19436149.2010.484532

[5] Տե՛ս Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները. 1918 թվականից մինչև մեր օրերը: Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 101, http://lib.ysu.am/disciplines_bk/0cf9923cdba29735b384e21791b44d2e.pdf

[6] Տե՛ս **Konrad-Adenauer-Stiftung** (2025, March 7), *The Armenian-Turkish normalization process: Discussion paper*. Regional Program Political Dialogue South Caucasus, Konrad-Adenauer-Stiftung. Retrieved from, https://www.kas.de/documents/269781/269830/The-Armenian-Turkish-Normalization-Process.pdf

[7] Տե՛ս **Սուվարյան Յու., Մելքումյան Մ., Նազարյան Գ., Գրիգորյան Կ.,** Հայաստանի և Թուրքիայի միջև առևտրատնտեսական հարաբերություններ. հնարավոր զարգացումներ և միտումներ, մենագրություն, Եր., «Տնտեսագետ», 2010, էջ 4:

ռիսկը կամ առնվազն դրա ինտենսիվությունն ու տևողությունը[8]:

Վիքեն Չեթերյանի «Բաց վերքեր. հայեր, թուրքեր և մեկ դար ցեղասպանություն» աշխատությունը[9] լույս է սփռում այն բանի վրա, թե ինչպես են չլուծված պատմական խնդիրները շարունակում ազդել ժամանակակից քաղաքական որոշումների վրա, ներառյալ տնտեսական փոխազդեցությունները և էմբարգոն: Չեթերյանը նշում է, որ թեև երկու ժողովուրդներն էլ հնարավորություններ են ունեցել կարգավորելու հարաբերությունները, այնուամենայնիվ, փոխադարձ անվստահությունը և պատմական դժգոհությունների շուրջ անհաշտությունը հաճախ խանգարում են այդ գործընթացի առաջընթացին:

Թոմաս դե Վաալի «Կովկաս»[10] աշխատությունն առաջարկում է Հարավային Կովկասում առևտրային ուղիների և տնտեսական փոխհարաբերությունների մանրամասն ուսումնասիրություն, ներառյալ Հայաստանի և Թուրքիայի միջև վիճելի տնտեսական հարաբերությունները: Դե Վաալը նշում է, որ չնայած քաղաքական լարվածությանը, առևտուրը շարունակվել է մի քանի տարի՝ աշխարհագրական հարևանության և տնտեսական անհրաժեշտության պատճառով: Դ. Սաֆարյանը ևս փաստում է, որ Հայաստանի և Թուրքիայի գործարարները մշտապես հնարավորություն են փնտրել փոխշահավետ առևտրատնտեսական կապեր հաստատելու և զարգացնելու համար[11]:

Համաշխարհային բանկի փորձագետ Ե. Պոլյակովը համոզված է, որ հակամարտությունը լրջորեն խեղաթյուրել է առևտրային հոսքերը և խաթարել տրանսպորտային ուղիները Հարավային Կովկասի տարածաշրջանում: Փոխարենը, խաղաղության դեպքում Հայաստանը կարող է ավելի քան կրկնապատկել իր ներմուծման հնարավորությունները, եթե ադրբեջանական և թուրքական շուկաները բացվեն, ինչը կարող է կրճատել Հայաստանի արտաքին առևտրային պակասուրդը մեկ երրորդից մինչև կեսով և ավելացնել ՀՆԱ-ն 30 տոկոսով[12]:

Հայ-եվրոպական քաղաքականության և իրավական խորհրդատվության կենտրոնը (AEPLAC), թերևս, առաջիններից մեկն էր հայ-թուրքական առևտրային հարաբերությունների վերաբերյալ խորքային հետազոտություն իրականացնելու գործում: Հայ-թուրքական սահմանի վերաբացման տնտեսական հետևանքները գնահատող հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ կարճաժամկետ հեռանկարում արտաքին առևտրի կառուցվածքում էական փոփոխություններ չեն լինի, տնտեսությունը կարձագանքի տրանսպորտային

---

[8] Տե՛ս **Cali M.** (2015), Trading away from conflict: Using trade to increase resilience in fragile states. Directions in Development – Trade. Washington, DC: World Bank Group, http://documents.worldbank.org/curated/en/475581468330024333

[9] Տե՛ս **Cheterian V.** (2023), Open wounds: Armenians, Turks, and a century of genocide (Reprint ed.). Oxford University Press. ISBN 9781787389687

[10] Տե՛ս **De Waal T.** (2018), The Caucasus: An introduction (2nd ed.). Oxford University Press, https://global.oup.com/academic/product/the-caucasus-9780190683092

[11] Տե՛ս **Սաֆարյան Դ.** (2014), Հայ-թուրքական առևտրատնտեսական կապերը դիվանագիտական հարաբերությունների բացակայության և փակ սահմանների պայմաններում (2001–2011 թթ.), «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (56), 2014, էջ 69-82, https://cyberleninka.ru/article/n/armenian-turkish-trade-and-economic-ties-under-conditions-of-blockade-and-absence-of-diplomatic-relations-2001-2011/viewer

[12] Տե՛ս **Polyakov E.** (2001, April), Changing trade patterns after conflict resolution in the South Caucasus (Policy Research Working Paper No. 2593). World Bank, https://hdl.handle.net/10986/19673

ծախսերի որոշակի կրճատմանը, երկրների կողմից առևտրի ծավալները կփոխվեն, բայց առևտրի կառուցվածքը կմնա նույնը: AEPLAC-ի փորձագետների գնահատմամբ՝ միջնաժամկետ հեռանկարում երկկողմ առևտրի ծավալի և կառուցվածքի ավելի էական փոփոխություններ են սպասվում: Միաժամանակ, կանխատեսվել է այլ երկրների հետ Հայաստանի առևտրի ծավալների աճ՝ ի հաշիվ Թուրքիայի ծովային և ցամաքային տրանսպորտային հզորությունների ավելի արդյունավետ օգտագործման շնորհիվ տրանսպորտային ծախսերի նվազման[13]:

Հայ-թուրքական սահմանի փակումից ի վեր թեև պարբերաբար ակտիվացել են հարաբերությունների կարգավորման ակնկալիքները, սակայն շոշափելի ձեռքբերումներ այս հարցում մինչ օրս չեն արձանագրվել: 2008 թվականին «ֆուտբոլային դիվանագիտությունը» հող նախապատրաստեց Անկարայի ու Երևանի միջև բանակցային գործընթացի դրական տեղաշարժի համար, ինչն ուղեկցվեց երկու երկրների գործարարների կողմից առևտրային կապերի հաստատումը խթանող քայլերի (պանրի, գինու, տեքստիլի համատեղ արտադրություն և այլն) ձեռնարկմամբ[14]: Ավելին, 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ստորագրվեցին հարաբերությունների կարգավորմանը միտված արձանագրություններ[15], սակայն վավերացման գործընթացը երկու երկրներում էլ լուրջ դիմադրության արժանացավ, մինչև որ 2018 թ. մարտի 1-ին ՀՀ նախագահի հրամանագրով ընթացակարգը վերջնականապես դադարեցվեց[1]:

Չնայած նախորդ բոլոր ջանքերին՝ Հայաստանի և Թուրքիայի միջև ցամաքային սահմանը մնում է փակ: Որպես սառը պատերազմի դարաշրջանի ժամանակակից հիշեցումներից մեկը՝ փակ սահմանը զգալիորեն խոչընդոտում է Հայաստանի և Թուրքիայի արևելյան շրջանների զարգացումը, այն ավելին է, քան պարզապես ֆիզիկական խոչընդոտ, քանի որ ձևավորում է համապատասխան հասարակությունների աշխարհայացքն ու ընկալումները[2]:

Թեև հարևան երկրների միջև փաստացիորեն ստեղծված իրավիճակը հաճախ բնութագրվում է «շրջափակում» կամ «էմբարգո» որակումներով, Թուրքիան դրան հակադարձում է՝ վկայակոչելով միջազգային իրավունքի նորմերը, համաձայն որոնց՝ սահմանի փակումը չի կարող որակվել որպես

---

[13] Տե՛ս **Jrbashyan T., Barseghyan H., Slobodyanyuk V., Shaboyan A.** (2007), Study of the economic impact on the Armenian economy from re-opening the Turkish-Armenian borders: Implications for external trade. AEPLAC, http://www.aiprg.net/UserFiles/File/Final%20Papers/Arm-Turk%20border% 20articleAEPLAC.pdf

[14] Տե՛ս **Փախլյան Ա.Ա.,** Հայաստան-Թուրքիա առևտրատնտեսական կապերի արդի վիճակը և զարգացման հեռանկարները, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #10-11 (111-112) սեպտեմբեր-հոհտեմբեր, 2009, էջ 28-30:

[15] Տե՛ս Protocol on the Establishment of Diplomatic Relations between the Republic of Armenia and the Republic of Turkey, Signed in Zurich on October 10, 2009, https://web.archive.org/web/20160305013329/http://www.mfa.am/u_files/20091013_protocol.pdf

[1] Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման հնարավորություններն ու մարտահրավերները / **Ա. Փախլյան և ուրիշներ**, Եր., «Տնտեսագետ», 2022, 189 էջ («Ամբերդ» մատենաշար - 57), էջ 16, https://asue.am/upload/files/amberd/Amberd-57.pdf

[2] Տե՛ս **Grigoryan A., Khachatryan K., Ter-Matevosyan V.** (2018), Armenia-Turkey border opening: What determines the attitude of Armenians? Caucasus Survey. Advance online publication, https://doi.org/10.1080/23761199.2018.1499298

«շրջափակում» կամ «էմբարգո» փոխադարձ առևտրաշրջանառության գոյության պայմաններում[3]:

Եվ սա այն դեպքում, երբ 2002 թվականի դեկտեմբերի 10-ին, դեռևս նախքան ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցելը, Թուրքիան վերապահում մտցրեց՝ հրաժարվելով վերջինիս նկատմամբ կիրառել առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կանոնները[4]: Վերապահումը գործում է մինչ օրս, ավելին՝ նույնիսկ սահմանների վերաբացման շուրջ պարբերաբար ակտիվացող քննարկումների ժամանակ Թուրքիայի կողմից ՀՀ-ի նկատմամբ ԱՀԿ կանոնների չկիրառման վերաբերյալ որոշման չեղարկումը բանակցային օրակարգում երբևէ չի հայտնվել: Իսկ դա նշանակում է, որ նույնիսկ երկու երկրների միջև սահմանների վերաբացման և փոխադարձ արտաքին առևտուրը օրինական հիմքերի վրա դնելու պարագայում Թուրքիան որևէ պարտավորվածություն չի ունենա Հայաստանի նկատմամբ՝ կիրառելու հստակ սահմանված, թափանցիկ և ոչ խտրական մաքսասակագնային քաղաքականություն:

Անկախ Թուրքիայի վարած քաղաքականությունից՝ նույնիսկ միակողմանի շրջափակման պայմաններում Հայաստանը երբևէ չի փորձել փոխադարձության սկզբունքով խոչընդոտել թուրքական ծագման ապրանքների ներկրումը՝ ընդհուպ մինչև չարաբաստիկ 2020 թվականը... Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ Ադրբեջանին Թուրքիայի բացահայտ աջակցությունը հիմք տվեց Հայաստանին թուրքական ծագման ապրանքների (հագուստից և տեքստիլից մինչև սննդամթերք ու մեքենաներ և այլն) ներմուծումն արգելելու մասին որոշում կայացնելու[5]:

Սերգեյ Դոխոլյանն ու Աննա Մակարյանը «Թուրքական ներմուծման արգելքի ազդեցության գնահատումը Հայաստանում հագուստի արտադրության աճի վրա»[6] հոդվածում ուսումնասիրում են արգելքի անմիջական և երկարաժամկետ տնտեսական հետևանքները՝ նշելով, որ թեև Հայաստանի Կառավարությունը ձգտում էր նվազեցնել իր կախվածությունը թուրքական ապրանքներից, այնուամենայնիվ, այլընտրանքային մատակարարներ ապահովելը դժվար էր:

Արգելքի առաջնային հետևանքների վերլուծությունը ցույց է տվել, որ 2021 թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում Թուրքիայից ներմուծումը կրճատվել է մոտ 70%-ով: Ընդ որում, որոշումը տարբեր կերպ է ազդել տարբեր ապրանքախմբերի վրա. արգելված ապրանքների գերակշիռ մասի

---

[3] Տե՛ս **Tocci N.,** The closed Armenia-Turkey border: economic and social effects, including those on the people; and implications for the overall situation in the region. Policy Department External Policies, 2007, էջ 9, http://www.tepsa.eu/download/studies_for_the_european_parliament/briefings-on-turkey/armeniaturkey_border.pdf

[4] Տե՛ս Accession of the Republic of Armenia, Invocation by the Republic of Turkey of article XIII of the Marrakesh Agreement Establishing the World Trade Organization with respect to the Republic of Armenia, WT/L/501, 3 December 2002 (02-6656), https://docs.wto.org/dol2fe/Pages/SS/directdoc.aspx?filename=Q:/WT/L/501.pdf&Open=True

[5] Տե՛ս ՀՀ Կառավարություն (2020, հոկտեմբերի 20). ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել թուրքական ծագման ապրանքների ներմուծման արգելքի մասին, https://www.gov.am/am/news/item/14934/

[6] Տե՛ս **Dokholyan S. V., Makaryan A. R.** (2023), Impact assessment of the ban on Turkish imports on the growth of wearing apparel manufacturing in Armenia. Economy of Regions, 19(2), էջ 524–540, https://www.economyofregions.org/ojs/index.php/er/article/view/770/264

ներմուծումը կրճատվել է 70-99%-ով, սակավաթիվ արգելվածներինը՝ 1-2%-ով, որոշ չարգելվածներինը՝ էապես, իսկ սակավաթիվ չարգելվածներինը զգալիորեն աճել է: Ներմուծման կրճատումն ուղեկցվել է տեղական արտադրության մի շարք ապրանքատեսակների արտադրության էական աճով, որը, սակայն, համարժեք չէ Թուրքիայից ներմուծման կրճատմանը[7]:

Այս ամենով հանդերձ, արգելքի ազդեցության մասշտաբներից ու խորությունից զատ, ուսումնասիրության արժանի է նաև արգելքի վերացումից հետո երկրների միջև առևտրային հարաբերությունների զարգացման հետագիծը:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության շրջանակներում կիրառվել են երկրորդային տվյալների հավաքագրման, փաստաթղթային ուսումնասիրության, համադրման և համեմատության, վիճակագրական վերլուծության, գրաֆիկական ներկայացման և այլ մեթոդներ: Հոդվածի համար գիտական և տեղեկատվական հիմք են հանդիսացել հայ-թուրքական առևտրային հարաբերությունների վերաբերյալ առանցքային հետազոտությունները, հոդվածները, զեկույցներն ու հաշվետվությունները, քանակական գնահատականները կառուցվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակվող վիճակագրական տվյալների շտեմարանների հիման վրա:

Փաստաթղթային մեթոդով ուսումնասիրվել են թուրքական ծագման ապրանքների արգելքի մասին համապատասխան իրավական ակտերն[8] ու Կառավարության որոշումները[9]: Մեթոդի կիրառումը թույլ է տվել հասկանալ, թե ինչ պատճառներով ու նպատակներով էր ընդունվել արգելքը և ի՞նչ ազդեցություն կարող էր ունենալ հայ-թուրքական առևտրի ծավալների վրա:

Տվյալների հավաքագրման և վիճակագրական վերլուծության մեթոդի կիրառմամբ հստակ պատկերացում է ձևավորվել թուրքական ծագման ապրանքների նկատմամբ արգելքի կիրառումից առաջ և հետո ապրանքների ներմուծման ծավալների փոփոխության վերաբերյալ: Թուրքական ծագման ապրանքների ներմուծման շարժընթացը դիտարկվել է բացարձակ ծավալների և ՀՀ ներմուծման կառուցվածքում դրանց ունեցած մասնաբաժնի համադրությամբ, ինչը թույլ է տվել համակողմանիորեն բացահայտել ժամանակավոր արգելքի կիրառումից հետո ձևավորված իրավիճակը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների շտեմարանի «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը (ըստ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման)» ցուցանիշների հիման վրա դիտարկվել է 2019–2023 թթ. թուրքական ծագման ապրանքների ներկրման ապրանքային կառուցվածքը: Որպես բազային են ընդունվել 2019 թ. ներմուծման ցուցանիշները, երբ արձանագրվել էր նախքան արգելքի կիրառումը թուրքական ծագման ապրանքների ամենամեծ ծավալը:

---

[7] Տե՛ս **Tadevosyan R.** (2021), Ban on the import of goods of Turkish origin and how we dealt with it. *AMBERD Bulletin*, 6(13), էջ 58–63, https://doi.org/10.52174/2579-2989_2021_6_58

[8] Տե՛ս Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, https://www.e-draft.am/index.php/projects/3328

[9] Տե՛ս ՀՀ Կառավարության 2020 թ. հոկտեմբերի 20-ի թիվ 1708-Ն որոշում, https://www.gov.am/am/news/item/14934/

Ներմուծման ապրանքային բաշխվածքի շարժընթացն ուսումնասիրվել է դիտարկվող ժամանակահատվածում (2019-2023 թթ.) ՀՀ ներմուծված թուրքական ծագման տասն առավել խոշոր ապրանքների ցուցանիշներով: Ընդ որում, 2019 թ. ՀՀ ներմուծված թուրքական ծագման տասն առավել խոշոր ապրանքախմբերի ցանկը համալրվել է հաջորդող տարիներին ներմուծված ապրանքների առավելագույն տասնյակում ներառված և բազային տարվա ցանկից տարբերվող ապրանքախմբերով: Հավաքագրված ցուցանիշների հիման վրա հաշվարկվել են բազային տարվա, ինչպես նաև արգելքի կիրառման ժամանակահատվածի համեմատությամբ հաջորդող տարիներին արձանագրված թուրքական ծագման ապրանքների ներմուծման ծավալների փոփոխությունները՝ արժեքային արտահայտությամբ:

Ներմուծման երկու ցուցանիշներից հիմք է ընդունվել «ներմուծում՝ ըստ ծագման երկրի» ցուցանիշը, որն արտացոլում է թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ծավալը՝ անկախ ապրանքների՝ արտահանող երկրից և Հայաստանում հայտնվելու երթուղուց: Մյուս՝ «ներմուծում՝ ըստ արտահանող երկրի» ցուցանիշը չի դիտարկվել, քանի որ այն ընդգրկում է բացառապես Թուրքիայից (ըստ էության՝ միայն օդային ճանապարհով) Հայաստան առանց միջնորդների արտահանված ապրանքների ծավալը, ինչը չի արտացոլում հայ-թուրքական առևտրի իրական ծավալը և կիրառելի չէ այս համատեքստում:

Թուրքական ապրանքների արգելքն իր ազդեցությամբ բազմաշերտ է և չի սահմանափակվում միայն տնտեսական հարթությամբ, ուստի ուսումնասիրությունների համար ընտրվել է քաղաքականությունների և ծրագրերի ազդեցության գնահատման համար միջազգային մակարդակում լայնորեն կիրառվող PESTEL մեթոդաբանությունը, ինչը թույլ է տալիս երևույթները դիտարկել բազմաչափ համատեքստում՝ համադրելով խնդրի քաղաքական, տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական, իրավական և բնապահպանական հարթությունները:

Ընտրված մեթոդների համադրումը հնարավորություն է տվել ամբողջական պատկեր ստանալու հայ-թուրքական առևտրի իրավիճակի վերաբերյալ թուրքական ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի պայմաններում:

Վերլուծություն: 2020 թվականից ի վեր առևտրի սահմանափակումների արագ աճ է նկատվում ամբողջ աշխարհում՝ տարբեր երկրների մի շարք ոլորտներում և տարբեր պատճառներով: COVID-19 համավարակը, պարենային անվտանգության ճգնաժամը, կլիմայական պայմանների փոփոխությունը և աշխարհաքաղաքական լարվածությունը արագացրել են առևտրի սահմանափակումների տեմպերը, որոնք կիրառվում են ամբողջ աշխարհում:

Հատկապես ակնառու է Ուկրաինայում պատերազմը սկսվելուց ի վեր սննդամթերքի, կերերի և պարարտանյութերի արտահանման սահմանափակումների աճը: Թեև Առևտրի համաշխարհային կազմակերպությունը 2022 թվականի սկզբին արձանագրել էր միայն մեկ գործող սահմանափակում, 2023 թվականի փետրվարի վերջին այդ թիվը հասավ 68-ի, իսկ 2023 թվակա-

նի հուլիսի կեսերին դրանցից 59-ը դեռևս գործող էին[10]:

2023 թվականի սեպտեմբերի 15-ին Ուկրաինային սահմանակից ԵՄ երեք անդամ պետություններ՝ Լեհաստանը, Հունգարիան և Սլովակիան, միակողմանիորեն սահմանափակեցին ուկրաինական որոշակի գյուղատնտեսական արտադրանքի ներմուծումը: Այս քայլը տեղի է ունեցել Եվրոպական հանձնաժողովի կողմից այդ երկրներ ուկրաինական հացահատիկի ներմուծման նախկին արգելքը (տարանցիկ փոխադրումների վրա այն չի տարածվել) չերկարաձգելու որոշմանն ընդառաջ[11]: Արգելքի կիրառմամբ ներմուծման սահմանափակման և ուկրաինական ավելի էժան ապրանքների հոսքից ներքին շուկայի պաշտպանության արդյունքում նկատվեց շուկայի որոշակի կայունացում:

Նմանօրինակ ձևով Հայաստանում է փորձ արվել «թոթափելու» հայկական շուկան թուրքական ծագման էժանագին ապրանքներից՝ 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ Թուրքիայի կողմից Ադրբեջանին ցուցաբերվող բացահայտ աջակցությանն ի պատասխան: Թեև որոշումն առաջին հերթին քաղաքական էր, սակայն հիմնված էր տնտեսական գործոնների վրա:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 1708-Ն որոշմամբ ժամանակավոր արգելք սահմանվեց թուրքական ծագում ունեցող վերջնական սպառման ապրանքների ներմուծման վրա[12]: Որոշումն ուժի մեջ մտավ 2021 թվականի հունվարի 1-ից՝ 6 ամիս ժամկետով՝ հիմք ընդունելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրի 47-րդ հոդվածը[13] և 7-րդ հավելվածը[14], ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2017 թ. մայիսի 17-ի N 21 կարգադրությունը[15], համաձայն որի՝ ԵԱՏՄ անդամ պետությունները երրորդ երկրների հետ առևտրում կարող են միակողմանիորեն կիրառել ոչ սակագնային կարգավորման միջոցներ՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով:

Ի սկզբանե ներմուծման ժամանակավոր արգելքի նպատակն էր տնտեսական պատժամիջոցներով սահմանափակել թուրքական ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա և խթանել տեղական արտադրությունը՝ միաժամանակ ավելացնելով արտաքին այլընտրանքային մատակարարումներ:

---

[10] Տե՛ս **Credendo** (2023, September 21), *International trade: increasing trade restrictions across the world*. Credendo Knowledge Hub. Retrieved from, https://credendo.com/en/knowledge-hub/international-trade-increasing-trade-restrictions-across-world

[11] Տե՛ս **Albaladejo Román A.** (2023, September 20), *Ukrainian grain: Understanding the import bans*. European Parliament Think-Tank (Members' Research Service). Retrieved from, https://epthinktank.eu/2023/09/20/ukrainian-grain-understanding-the-import-bans/

[12] Տե՛ս ՀՀ Կառավարության 2020 թ. հոկտեմբերի 20-ի N 1708-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին», https://www.arlis.am/hy/acts/149696

[13] Պայմանագիր Եվրասիական տնտեսական միության մասին (29.05.2014, Աստանա), https://www.arlis.am/hy/acts/95203

[14] Տե՛ս Արձանագրություն «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի հավելված 7), https://www.arlis.am/hy/acts/95203

[15] Տե՛ս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 21 կարգադրություն «Անդամ պետություններից մեկի կողմից հատուկ տնտեսական միջոցների միակողմանիորեն կիրառման դեպքում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների փոխգործակցության մասին», https://www.arlis.am/hy/acts/124818

2020 թվականին համավարակով, այնուհետև նաև Հայաստան-Ադրբեջան պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ ներմուծումը նվազել է 13.7%-ով և կազմել 231,5 մլն ԱՄՆ դոլար (գծապատկեր 1): 2020 թվականի դեկտեմբերի 31-ից ուժի մեջ մտած արգելքը զգալիորեն նվազեցրել, բայց, այնուամենայնիվ, չի վերացրել թուրքական ծագման ապրանքների ներմուծումը:

Միաժամանակ, երրորդ երկրի հանդեպ ՀՀ-ի կողմից միակողմանիորեն ներմուծված ոչ սակագնային կարգավորման միջոցն ունեցել է որոշակի բացառություններ, մասնավորապես՝ թուրքական ծագման ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքը չի տարածվել՝ «վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ներմուծվող, մինչև 2020-ի հոկտեմբերի 20-ը կնքված մատակարարման պայմանագրերով ձեռք բերված, հաճախորդների երաշխիքային և հետերաշխիքային սպասարկում իրականացնելու համար նախատեսված, ՀՀ-ում մշտական բնակության տեղափոխված անձ ճանաչված ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների վրա, ինչպես նաև ՀՀ-ից այլ երկրներ հետագա արտահանման ենթակա (այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներ) ԱՏԳ ԱԱ 07 (բանջարեղեն), 08 (մրգեր) ապրանքային խմբերին դասվող ապրանքների ներմուծման վրա:



Գծապատկեր 1. ***Թուրքական ծագման ապրանքների ծավալներն ու մասնաբաժինը ՀՀ ներմուծման կառուցվածքում (հազ. ԱՄՆ դոլար, %)***[16]

[16] Կազմել են հեղինակները՝ հիմք ընդունելով ՀՀ ՎԿ տվյալների շտեմարանը՝ https://statbank.armstat.am

Գծապատկեր 1-ում արտացոլված են 2015–2024 թվականների ընթացքում ինչպես ՀՀ ներմուծված թուրքական ծագման ապրանքների բացարձակ ծավալները (արտահայտված հազար ԱՄՆ դոլարով), այնպես էլ մասնաբաժինը ՀՀ ներմուծման ընդհանուր կառուցվածքում (%), որոնց համադրությունը թույլ է տալիս ստանալ առավել իրատեսական պատկեր: Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ ներմուծման կառուցվածքում թուրքական ծագման ապրանքների համեմատաբար մեծ (4.8–5.4%) մասնաբաժին է գրանցվել 2016–2020 թթ.: Սա այն դեպքում, երբ Թուրքիայի արտահանման կազմում Հայաստանի տեսակարար կշիռը ընդամենը 0.1% է եղել, ինչն ակնառու կերպով ցույց է տալիս, որ Թուրքիան իր ներքին կարգավորումներով արգելում է հայկական ապրանքների մուտքն իր շուկա:

Համեմատության համար նշենք, որ 2017 թվականին ներմուծման կառուցվածքում 5.4% տեսակարար կշռով Թուրքիան 3-րդ խոշոր երկիրն էր ՀՀ առևտրային գործընկերների ցանկում՝ զիջելով միայն Ռուսաստանին (28.6%) և Չինաստանին (11.7%)[17]: 2020 թվականին Թուրքիան 5-րդն էր ՀՀ ներմուծման կառուցվածքում՝ 5.1% մասնաբաժնով[18]: Նմանօրինակ ցուցանիշը բավականին բարձր է՝ հատկապես երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների ու պաշտոնական առևտրի բացակայության պայմաններում: 2021 թ.՝ արգելքի կիրառման ժամանակահատվածում, թուրքական ծագման ապրանքների ներմուծումը կտրուկ անկում ապրեց՝ նախորդ տարվա 231.5 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 73 մլն-ի, ինչը ՀՀ ներմուծման կառուցվածքում կազմել է ընդամենը 1.4%՝ Թուրքիային իջեցնելով 11-րդ հորիզոնական ՀՀ ներմուծման ծավալներով խոշոր առևտրային գործընկեր երկրների ցանկում:

Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոնի (ACSES) գնահատմամբ՝ արգելքի կիրառումից հետո 2021 թ. հունվար-դեկտեմբերին Թուրքիայից Հայաստան ներմուծումը կրճատվել է մոտ 70%-ով, ընդ որում, ժամանակավոր արգելված ապրանքների ներմուծումը կրճատվել է 92%-ով (2020 թ. 129.2 մլն ԱՄՆ դոլարից իջնելով 10.8 ԱՄՆ դոլարի), իսկ թույլատրելի ապրանքներինը՝ 39%-ով (կազմելով 61.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 101.1 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն)[19]:

Արգելքի գործողության ընթացքում արգելված ապրանքների փաստացի ներկրումն ունի հստակ հիմնավորում: Այս դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ արգելքը մասնակի էր և չէր բացառում հումքային, «վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ներմուծվող, ՀՀ-ում մշտական բնակության տեղափոխված անձ ճանաչված ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող անձնական օգտագործման և այլ ապրանքների ներմուծումը[20]: Բացի այդ, այլ եղանակներով ներմուծումը վե-

---

[17] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ (Արմստատ), Հայաստանի վիճակագրական տարեգիրք -2020, Եր., էջ 526, https://armstat.am/file/doc/99520858.pdf

[18] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ (Արմստատ), Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2022, Եր., էջ 537, https://armstat.am/file/doc/99533523.pdf

[19] Armenian Center for Socio-Economic Studies (ACSES). (2022), *Թուրքական ապրանքները «վերադառնում» են հայկական շուկա* [Turkish goods are “returning” to the Armenian market]. Retrieved [access date: September 4, 2025], https://www.acses.am/ra-turkey-trade/

[20] Տե՛ս ՀՀ Կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի 1048-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին», https://www.e-gov.am/gov-decrees/item/36446/

րահսկելը գործնականում իրատեսական չէր: Չնայած այն հանգամանքին, որ մաքսային մարմինները վերահսկել և կանխել են արգելված ապրանքների մուտքը ՀՀ, ԵԱՏՄ անդամ երկրներից ներմուծված ապրանքները չեն ենթարկվում մաքսային զննման: Հետևաբար՝ տվյալ ապրանքներն առանց խոչընդոտի ներմուծվել են Հայաստան: Ցամաքային փակ սահմանը չի խանգարել, որ Հայաստանը Թուրքիայից տարատեսակ ապրանքներ ներկրի՝ հիմնականում Վրաստանի տարածքով:

Սահմանափակումների վերացումից հետո թուրքական ապրանքների հոսքը դեպի ՀՀ վերականգնվել է: Ընդհանուր 8,775.859 հազ. ԱՄՆ դոլարի ներմուծման կառուցվածքում թուրքական արտադրանքի մասնաբաժինը 2022 թվականին կազմել է 3%: Ներմուծումը նոր թափ ստացավ՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով մոտ 3,6 անգամ և կազմելով 263,394.4 հազ. ԱՄՆ դոլար, ինչը գրեթե համարժեք էր տրանսպորտային շրջափակման երեք տասնյակից ավելի տարիների ընթացքում գրանցված ներմուծման ամենաբարձր ցուցանիշին (2019 թ.՝ 268,098.4 հազ. ԱՄՆ դոլար), իսկ արդեն 2023 թվականին գրանցված աննախադեպ աճի արդյունքում նախորդ տարվա համեմատությամբ ներմուծումն ավելացել է մոտ 28%-ով (25.7%-ով գերազանցելով նաև 2019 թ-ի՝ մինչ այդ չգերազանցված ցուցանիշը)՝ կազմելով 337,130.7 հազ. ԱՄՆ դոլար: Թուրքիան դարձյալ բարելավեց ներմուծման ցուցանիշով իր դիրքը ՀՀ խոշոր առևտրային գործընկերների ցանկում (2022 թ.՝ 7-րդը, իսկ 2023 թ.՝ 10-րդը)[21]: 2024 թվականին պահպանվել են թուրքական ծագման ապրանքների ներմուծման նախապատերազմական ժամանակահատվածի առավելագույն մակարդակը զգալիորեն գերազանցող ցուցանիշներ (335,910.7 հազ. ԱՄՆ դոլար)[22]:

ՀՀ ներմուծման կառուցվածքում միայն թուրքական ծագման ապրանքների մասնաբաժնի շարժընթացը դիտարկելիս թյուր ընկալում է ձևավորվում, թե ներմուծման արգելքի չեղարկումից հետո թուրքական ծագման ապրանքներից ՀՀ կախվածությունը համեմատաբար թուլացել է: Արգելքի կիրառմանը (2021 թ.՝ 1.4%) հաջորդած ժամանակահատվածում ՀՀ ներմուծման կառուցվածքում թուրքական ծագման ապրանքների մասնաբաժինը տատանվել է 2–3%-ի սահմաններում, մինչդեռ նախքան արգելքի կիրառումն այդ ցուցանիշը կրկնակի բարձր էր՝ 4.2–5.4%: Բացարձակ ցուցանիշները բոլորովին այլ պատկեր են արձանագրում. արգելքի չեղարկումից հետո թուրքական ծագման ապրանքների ներկրումն էապես գերազանցել է առավելագույն մակարդակը: Պարզապես, 2022 թ-ից ՀՀ արտաքին առևտրի աննախադեպ աճի ֆոնին, ներկրված թուրքական ապրանքների մասնաբաժինն ընդհանուրի մեջ կրճատվել է:

Ու թեև 2020 թվականից ի վեր ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» վիճակագրական ժողովածուների շարքի «Արտաքին հատված» բաժնում Թուրքիան այլևս չի հիշատակվում առանձնացված գործընկեր երկրների ցանկում, միևնույն է, վերջինիս «հետքը» ՀՀ ներմուծման կառուցվածքում

[21] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ (Արմստատ), Հայաստանի վիճակագրական տարեգիրք -2024, Եր., էջ 560, https://armstat.am/file/doc/99552373.pdf

[22] Համաձայն ՀՀ ՎԿ տվյալների շտեմարանի, https://statbank.armstat.am

դրանից չի նվազում: Բնականաբար, Թուրքիայից ներմուծման ցուցանիշը ներառված է «Այլ երկրներ» կատեգորիայում, որի մասնաբաժինը ՀՀ ներմուծման կառուցվածքում վերջին տարիներին առերևույթ աճել է:

Արգելքը զգալի հետևանքներ ունեցավ հայ-թուրքական առևտրի վրա, քանի որ Թուրքիան Հայաստանի տարբեր սպառողական ապրանքների, այդ թվում՝ գյուղմթերքի որոշ տեսակների, տեքստիլի, կենցաղային ապրանքների և շինանյութերի հիմնական մատակարարն էր: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2020 թ. թուրքական ծագման որոշ ապրանքներ գերիշխել են ՀՀ շուկայում: Մասնավորապես՝ Հայաստանի կախվածությունը թուրքական ծագման լոլիկից 83% էր, բամբակե գործվածքներից՝ 78.5%, ալյումինե ձողերից և տրամատներից՝ 71%, տրիկոտաժե քաթանների ներմուծումից՝ 70%[23]:

Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոնի (ACSES) գնահատմամբ՝ արգելքի կիրառմամբ 2021 թ. Թուրքիայից Հայաստան ներմուծումը կրճատվել է մոտ 70%-ով՝ կազմելով մոտ 73 մլն ԱՄՆ դոլար՝ 2020-ի 230 մլն-ի փոխարեն: Ընդ որում, ժամանակավորապես արգելված թուրքական ծագման ապրանքների ներմուծումը կրճատվել է 92%-ով (2020 թ. 129.2 մլն ԱՄՆ դոլարից 2021-ին հասնելով 10.8 մլն-ի), իսկ թույլատրելի ապրանքների ներմուծումը՝ 39%-ով (2021 թ. կազմելով 61.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 101.1 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն)[24]:

Աղյուսակ 1-ում ամփոփված է 2019–2024 թթ. ընթացքում թուրքական ծագման ապրանքների ՀՀ ներմուծման շարժընթացը՝ ըստ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման:

Աղյուսակում ընդգրկվել են բազային տարում (2019 թ.) ՀՀ ներմուծված թուրքական ծագման ապրանքներից տասն առավել խոշորները, այդ ցանկը համալրվել է հաջորդող տարիներին ներմուծված ապրանքների առավելագույն տասնյակում ներառված և բազային տարվա ցանկից տարբերվող ապրանքախմբերով: Աղյուսակում հաշվարկվել են 2019 թ. համեմատությամբ հաջորդող տարիներին թուրքական ծագման ապրանքների ներմուծման ծավալի (արժեքային արտահայտությամբ) փոփոխությունները, իսկ 2022 թ. սկսած՝ նաև արգելքի կիրառման ժամանակահատվածի համեմատությամբ շարժընթացը:

---

[23] Տե՛ս **Փախլյան Ա., Աղաջանյան Ս., Վարդանյան Տ. և ուրիշներ** (2022), *Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման հնարավորություններն ու մարտահրավերները*, Եր., «Տնտեսագետ» («Ամբերդ» մատենաշար, թիվ 57), 189 էջ, https://asue.am/upload/files/amberd/Amberd-57.pdf, էջ 53:

[24] Տե՛ս Armenian Center for Socio-Economic Studies (ACSES) (2022), *Թուրքական ապրանքները «վերադառնում» են հայկական շուկա* [Turkish goods are "returning" to the Armenian market]. Retrieved [access date: September 4, 2025], https://www.acses.am/ra-turkey-trade/

Աղյուսակ 1

ՀՀ ներմուծումը Թուրքիայից ըստ ապրանքատեսակների 2019–2024 թթ. (հազ. ԱՄՆ դոլար)[25]

Ծած-կագիր	Ապրանքախմբի անվանում	Տարեթիվ					
		2019	2020	2021	2022	2023	2024
8	Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ	15,429.0	12,724.1 ↓17.5% vs. 2019	414.9 ↓97.3% vs. 2019	10,132.4 ↓34.3% vs. 2019 ↑24.4 անգամ vs. 2021	9,550.8 ↓38.1% vs. 2019 ↑23 անգամ vs. 2021	10,518.1 ↓31.8% vs. 2019 ↑25 անգամ vs. 2021
27	Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	24,343.3	5,393.4 ↓77.8% vs. 2019	171.9 ↓141.6 անգամ vs. 2019	10,317.5 ↓57.6% vs. 2019 ↑60 անգամ vs. 2021	22,356.1 ↓8.2% vs. 2019 ↑130.1 անգամ vs. 2021	14,142.7 ↓41.9% vs. 2019 ↑82.3 անգամ vs. 2021
34	Օճառ, մակերեսային ակտիվ օրգանա-կան միջոցներ, մաքրող միջոցներ և քսուկներ, մոմեր և հարդարանքի այլ միջոցներ	7,232.7	6,729.0 ↓7% vs. 2019	505.3 ↓14.3 անգամ vs. 2019	5,897.0 ↓18.5% vs. 2019 ↑11.7 անգամ vs. 2021	7,916.8 ↑9.5% vs. 2019 ↑15.7 անգամ vs. 2021	10,957.0 ↑51.5% vs. 2019 ↑21.7 անգամ vs. 2021
39	Պլաստմասսա և դրանից իրեր	19,204.9	16,717.9 ↓12.9% vs. 2019	5,825.6 ↓69.7% vs. 2019	14,120.3 ↓26.5% vs. 2019 ↑2.4 անգամ vs. 2021	15,181.5 ↓20.9% vs. 2019 ↑2.6 անգամ vs. 2021	16,997.9 ↓11.5% vs. 2019 ↑2.9 անգամ vs. 2021
44	Փայտ և փայտից իրեր, փայտածուխ	8,700.3	7,632.4 ↓12.3% vs. 2019	8,617.5 ↓1% vs. 2019	10,309.7 ↑18.5% vs. 2019 ↑19.6% vs. 2021	10,226.3 ↑17.5% vs. 2019 ↑2.4 անգամ vs. 2021	10,817.4 ↑24.3% vs. 2019 ↑25.5 անգամ vs. 2021
52	Բամբակ	7,330.1	6,413.5 ↓12.5% vs. 2019	3,577.5 ↓51.2% vs. 2019	4,776.7 ↓34.8% vs. 2019 ↑33.5% vs. 2021	5,339.9 ↓27.2% vs. 2019 ↑49.3% vs. 2021	6,167.1 ↓15.9% vs. 2019 ↑72.4% vs. 2021

[25] Աղյուսակը կազմել և հաշվարկներն իրականացրել են հեղինակները՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը (ըստ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման)» 2019–2024 թթ. տվյալների շտեմարանի հիման վրա, https://armstat.am/am/?nid=766

55	Քիմիական գործվածք	818.5	728.5 ↓11% vs. 2019	452.2 ↓44.8% vs. 2019	8,768.7 ↑10.7 անգամ vs. 2019 ↑19.4 անգամ vs. 2021	12,568.2 ↑15.3 անգամ vs. 2019 ↑27.8 անգամ vs. 2021	15,683.5 ↑19.2 անգամ vs. 2019 ↑34.7 անգամ vs. 2021
60	Տրիկոտաժե պաստառ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	11,092.1	8,895.3 ↓19.8% vs. 2019	8,864.2 ↓20.1% vs. 2019	12,481.2 ↑12.5% vs. 2019 ↑40.1% vs. 2021	17,180.1 ↑54.9 % vs. 2019 ↑93.8 % vs. 2021	17,880.2 ↑61.2 % vs. 2019 ↑101.7 % vs. 2021
61	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	31,003.8	24,155.6 ↓22.1% vs. 2019	296.4 ↓99% vs. 2019	14,298.1 ↓53.9% vs. 2019 ↑48.2 անգամ vs. 2021	22,555.5 ↓27.2% vs. 2019 ↑76 անգամ vs. 2021	18.507.2 ↓40.3% vs. 2019 ↑62.4 անգամ vs. 2021
62	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	7,171.5	8,528.9 ↓18.9% vs. 2019	149.2 ↓97.9% vs. 2019	14,611.9 ↑103.7% vs. 2019 ↑97.9 անգամ vs. 2021	25,156.7 ↑3.5 անգամ vs. 2019 ↑168.6 անգամ vs. 2021	19,391.9 ↑4 անգամ vs. 2019 ↑130 անգամ vs. 2021
76	Ալյումին և իրեր դրանից	7,049.8	9,170.2 ↓21.8% vs. 2019	8,137.6 ↑15.4% vs. 2019	10,010.6 ↑12.5% vs. 2019 ↑40.1% vs. 2021	14,975.8 ↑12.5% vs. 2019 ↑40.1% vs. 2021	17,359.9 ↑2.5 անգամ vs. 2019 ↑2.1 անգամ vs. 2021
84	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	23,720.2	28,261.6 ↑19.1% vs. 2019	11,343.2 ↓52.2% vs. 2019	30,448.9 ↑28.4% vs. 2019 ↑2.7 անգամ vs. 2021	36,760.4 ↑55% vs. 2019 ↑3.2 անգամ vs. 2021	34,681.3 ↑46.2% vs. 2019 ↑3.1 անգամ vs. 2021
85	Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	11,771.1	10,397.3 ↓11.7% vs. 2019	473.9 ↓96% vs. 2019	11,848.0 ↑0.7% vs. 2019 ↑25 անգամ vs. 2021	12,004.7 ↑2% vs. 2019 ↑25.3 անգամ vs. 2021	14,533.3 ↑23.5% vs. 2019 ↑30.1 անգամ vs. 2021
87	Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը, դրանց մասեր և սարքավորումներ	10,611.8	6,166.2 ↓41.9% vs. 2019	1,105.0 ↓89.6% vs. 2019	13,379.8 ↑26.1% vs. 2019 ↑12.1 անգամ vs. 2021	14,240.0 ↑34.2% vs. 2019 ↑12.9 անգամ vs. 2021	10,731.4 ↑1.1% vs. 2019 ↑9.7 անգամ vs. 2021
94	Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր	7,120.85	5,005.7 ↓29.7% vs. 2019	157.1 ↓97.8% vs. 2019	4,936.1 ↓30.1% vs. 2019 ↑31.4 անգամ vs. 2021	7,364.2 ↑3.4% vs. 2019 ↑46.9 անգամ vs. 2021	13,679.2 ↑92.1% vs. 2019 ↑87.1 անգամ vs. 2021

Հաշվարկները ցույց տվեցին, որ թեև ներմուծման ծավալների անկում արձանագրվել է դիտարկվող բոլոր ապրանքախմբերի դեպքում, դրանցից որոշների մասով արգելքի չեղարկումից հետո ներմուծման երբեմնի ծավալները դեռևս չեն վերականգնվել (ուտելի մրգեր և ընկույզներ, պլաստմասսա և դրանից իրեր, բամբակ, հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք), միաժամանակ, կան նաև այնպիսիները, որոնց ներմուծումն աճել է հատկապես արգելքի չեղարկումից հետո՝ էապես գերազանցելով նախորդ ժամանակահատվածի մակարդակը: Այդպիսիք են՝ «Փայտ և փայտից իրեր, փայտածուխ», «Քիմիական գործվածք», «Տրիկոտաժե պաստառ մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Ալյումին և իրեր դրանից», «Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ, և մեխանիկական մասեր», «Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր», «Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը, դրանց մասեր և սարքավորումներ», «Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր» ապրանքախմբերը: Այսպես օրինակ՝ թուրքական ծագման քիմիական գործվածքի ներմուծումը 2024 թ., 2019 թ. համեմատությամբ, աճել է 19.2 անգամ, իսկ 2021 թ. համեմատությամբ՝ 34.7 անգամ: «Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ, և մեխանիկական մասեր» ապրանքախմբի ներմուծումը 2023 թ. աճել է 2019 թ. համեմատությամբ 55%-ով, իսկ 2021 թ. նկատմամբ՝ 3.2 անգամ. 2024 թ. ցուցանիշը փոքր-ինչ զիջել է 2023-ին արձանագրված մակարդակը:

Թուրքական ծագման ապրանքների արգելքն իր ազդեցությամբ չի սահմանափակվում միայն տնտեսական հարթությամբ, այն միաժամանակ ունի քաղաքական, սոցիալական, իրավական և նույնիսկ բնապահպանական բաղադրիչներ: Թուրքական ծագման ապրանքների արգելքի ազդեցությունները համակողմանի, համակարգված և միաժամանակ պարզ ձևաչափով ներկայացնելու համար կիրառվել է PESTEL վերլուծությունը, քանի որ այն թույլ է տալիս ամբողջական դիտակետից վերլուծել այս բազմաշերտ ազդեցությունները:

Աղյուսակ 2

ՀՀ-ում թուրքական ծագման ապրանքների նկատմամբ ներմուծման ժամանակավոր արգելքի հետևանքների PESTEL վերլուծություն

Գործոններ		Մեկնաբանություններ
P	POLITICAL Քաղաքական	• Արգելքը քաղաքական պատասխան էր 2020 թ. 44-օրյա պատերազմում Թուրքիայի ներգրավվածությանը և բացահայտ աջակցությանը Ադրբեջանին: • Այն նաև խորհրդանշական նշանակություն ուներ՝ ցույց տալու քաղաքական ինքնուրույնություն և ազգային շահերի պաշտպանություն: • Արգելքը նաև ընդգծեց Հայաստանի պատրաստակամությունը տնտեսական գործիքներ օգտագործելու՝ իր արտաքին քաղաքական դիրքորոշումը վերահաստատելու նպատակով: • Հայաստանում հասարակական կարծիքը հիմնականում պաշտպանում էր թուրքական ծագման ապրանքների արգելքը՝ աշխարհաքաղաքական իրավիճակի պատճառով: • Քաղաքական դիտանկյունից արգելքը կարող է շահարկումների առիթ հանդիսանալ՝ մեկնաբանվելով որպես Հայաստան-Թուրքիա տնտեսական կապերի հնարավոր վերականգնման խոչընդոտ կամ լարվածության խորացման դրդապատճառ: • Ըստ էության, քաղաքական առումով ևս արգելքը չի ծառայել իր նպատակին՝ չբավարարելով պատերազմական իրավիճակում Ադրբեջանին զինելու վերաբերյալ Թուրքիայի նկատմամբ պատժամիջոց կիրառելու պահանջը:
E	ECONOMIC Տնտեսական	• Կարճաժամկետում որոշ ապրանքների մասով (հագուստ, կոշիկ, սնունդ) թանկացում արձանագրվեց, քանի որ թուրքական ապրանքները համեմատաբար մատչելի էին: • Տեղական արտադրողները ստացան շուկայում դիրքավորվելու և լրացուցիչ մասնաբաժնի ձեռքբերման հնարավորություն: • Ներմուծողները ստիպված եղան մատակարարման այլընտրանքային աղբյուրներ որոնել, թուրքական ծագման ապրանքները փոխարինել այլ երկրների արտադրանքով՝ բարձրացնելով ծախսերը: • Որոշ ապրանքատեսակների այլընտրանքային ներմուծողները չէին կարողացել ապահովել բավարար և որակյալ արտադրանք, ինչը դժվարություններ էր առաջացրել շուկայի որոշ ոլորտներում, ինչպիսիք են կենցաղային տեխնիկան, հագուստը և լայն սպառման այլ ապրանքներ: • Մեկամյա արգելքը թեպետ նկատելիորեն կրճատեց թուրքական արտադրանքի ներմուծման ծավալները, սակայն ժամանակը շատ քիչ էր տեղական արտադրության ծավալները մեծացնելու համար: Այսինքն՝ մեկ ուղղությամբ ներմուծում չունենալը դեռ չի նշանակում, որ արտադրությունը պետք է զարգանա. դա ընդամենը մեկ նախադրյալ է: • Բյուջեի մաքսային եկամուտների կրճատումը նշանակալի չէր, կորուստները մասամբ փոխհատուցվել են՝ ի հաշիվ ԵԱՏՄ երկրներից այլընտրանքային ներմուծումների աճի:
S	SOCIAL Սոցիալական	• Հանրային ընկալմամբ թուրքական ծագման ապրանքների ներմուծման արգելքը դիտվեց որպես հայրենասիրական քայլ: • Սպառողների շրջանում ձևավորվեց տեղական, հայրենական արտադրանքին նախապատվություն տալու հզոր ալիք: • Սպառողները բախվեցին գնաճի և ապրանքների ընտրության սահմանափակման խնդիրներին: • Մանրածախ առևտրի ոլորտում գործող և թուրքական ծագման ապրանքների ներմուծումից կախված որոշ տնտեսավարողների շրջանում առաջացան դժգոհություններ:

T	TECHNOLOGICAL Տեխնոլոգիական	• Սպառողական ապրանքներից բացի, Թուրքիայից ներմուծվում են նաև տեխնոլոգիական նշանակության ապրանքներ (էլեկտրատեխնիկա, մեքենաշինական մասեր, կենցաղային սարքեր), որոնց մասով արգելքը որոշակի բաց ստեղծեց՝ հատկապես միջին և ցածր գների տեխնոլոգիական շուկայում: • Արգելքից հետո Հայաստանում ուժեղացավ թուրքական ծագման ապրանքների ներկրման ոչ պաշտոնական, շրջանցող և միջնորդավորված մեխանիզմների կիրառումը: • Թուրքական ծագման ապրանքները հաճախ հասանելի էին նաև առցանց հարթակներում: Արգելքը բացահայտեց թվային առևտրի վերահսկման տեխնոլոգիաների թույլ կողմերը:
L	LEGAL Իրավական	• Արգելքը հիմնավորվեց ՀՀ Կառավարության որոշմամբ՝ որպես ժամանակավոր միջոց: • Երկարաձգման հնարավորությամբ վեցամսյա ժամկետի որոշումը պայմանավորված էր ԵԱՏՄ շրջանակներում գործող միասնական օրենսդրական կարգավորումների սահմանափակումներով, համաձայն որոնց՝ անդամ երկրները միանձնյա կարգով առևտուրը սահմանափակող միջոցներ կարող են կիրառել առավելագույնը 6 ամիս ժամկետով՝ անընդմեջ երկարաձգման հնարավորությամբ: • Թեև օրենսդրական մակարդակում նման ձևաչափով արգելքի կիրառումը համապատասխանում է ներմուծման սահմանափակման միջազգային ընդունված գործիքակազմին, այն կարող է խնդրահարույց որակվել առևտրի ազատության սկզբունքի տեսանկյունից: • Անկախ այն հանգամանքից, որ Թուրքիան Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կանոնների կիրառման վերապահում է հայտարարել Հայաստանի նկատմամբ (դեռևս 2002 թ.), Հայաստանը՝ որպես կառույցին ավելի ուշ անդամակցած երկիր, Թուրքիայի հանդեպ ԱՀԿ կանոնները հայելային սկզբունքով չկիրառելու ազատություն չունի:
E	ENVIRONMENTAL Բնապահպանական	• Արգելված ապրանքները սկսեցին փոխարինվել այլ, ավելի հեռավոր երկրներից ներմուծումներով, ինչը երկարացրեց մատակարարման շղթաները՝ մեծացնելով վառելիքի ծախսն ու ածխածնային հետքը (carbon footprint): • Միաժամանակ, տեղական արտադրության խթանումը, հանգեցնելով ներմուծման փոխարինման, կարող էր շրջակա միջավայրի վրա դրական ազդեցություն ունենալ:

Ամփոփելով հետազոտությունը՝ կարող ենք փաստել, որ 2020 թվականին ՀՀ Կառավարության կողմից հաստատված սահմանափակումը տնտեսության վրա ունեցել է միաժամանակ դրական և բացասական հետևանքներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արգելքի մասին որոշումը ներառում էր որոշ բացառություններ և ուժի մտնելուց հետո ենթարկվել է փոփոխությունների, Թուրքիայից ներմուծումները 2021 թվականին նվազել են, բայց լիովին չեն դադարել:

Այդուհանդերձ, տարբեր իրավիճակներով պայմանավորված, 2022 թվականի հունվարից, տնտեսական պահանջներից ելնելով, Հայաստանը վերացրեց թուրքական ծագման ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքը: Թեև արգելքը հանգեցրել էր այնպիսի խնդիրների, ինչպիսիք են գների աճը և ապրանքների բազմազանության կրճատումը, այն նաև հնարավորություններ է ստեղծել Հայաստանում տեղական արդյունաբերության և առևտրի բազմազանեցման համար:

Թուրքական ապրանքների արգելքի պատճառով Հայաստանի մանրածախ վաճառողները ստիպված են եղել ապրանքների մատակարարման

այլընտրանքային աղբյուրներ փնտրել՝ նախկինում Թուրքիայից ներկրված ապրանքների փոխարեն: Հատկապես տուժել են այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են տեքստիլը, սննդամթերքը, կենցաղային ապրանքները և շինանյութերը: Հիմնական այլընտրանք են դարձել Ռուսաստանը, Իրանը և Չինաստանը՝ ապահովելով փոխարինող ապրանքներ, թեև երբեմն ավելի բարձր արժեքով կամ որակի այլ մակարդակով:

Արգելքի անմիջական հետևանքներից մեկը որոշ ապրանքների գների բարձրացումն էր: Թուրքական ծագման ապրանքները հաճախ մրցակցային գներ ունեին, և դրանք այլ երկրներից ներմուծմամբ փոխարինելը մեծացնում էր բիզնեսի և սպառողների ծախսերը: Սա հատկապես նկատելի էր տեքստիլ արդյունաբերության և շինանյութերի արտադրության ոլորտներում, այն հատվածներում, որտեղ թուրքական ապրանքները լայնորեն ներկայացված էին: Օրինակ՝ Հայաստանը մեծ քանակությամբ լոլիկ է ներկրում Թուրքիայից, որտեղ ապրանքի ինքնարժեքը շատ ավելի ցածր է, քան Հայաստանում: Դրան նպաստում են կլիման, էներգակիրների էժանությունը, պետական սուբսիդավորումները, արտադրական մեծ ծավալները: Բացի այդ, Թուրքիայի տեղական արտադրողները պետությունից աջակցություն են ստանում արտահանման սուբսիդավորման տեսքով:

Այս ամենի դրական կողմն այն էր, որ արգելքը հայ արտադրողների համար հնարավորություն ստեղծեց լրացնելու թուրքական ապրանքների թողած բացերը: Կառավարությունը այդ ընթացքում փորձ արեց էլ ավելի խրախուսելու ներքին արտադրությունը, իսկ որոշ տեղական ընկերություններ ընդլայնեցին իրենց գործունեությունը՝ բավարարելու այն ապրանքների պահանջարկը, որոնք այլևս հնարավոր չէր ներմուծել Թուրքիայից: Օրինակ՝ հայկական տեքստիլ ընկերությունները սկսել էին զբաղվել հագուստի և կենցաղային ապրանքների արտադրությամբ:

Եզրակացություն: Թուրքիան աշխարհաքաղաքական դրդապատճառներով 1993 թվականից ի վեր միակողմանի և երկարատև շրջափակում է կիրառում Հայաստանի նկատմամբ, որն իրականում հավասարազոր է փաստացի առևտրային էմբարգոյի՝ նույնիսկ առանց պաշտոնական իրավական ակտի: Հայ-թուրքական առևտրային հարաբերությունները շրջափակման ողջ ընթացքում թեև երբևէ չեն դադարել, սակայն ենթարկվել են վայրիվերումների՝ պայմանավորված պատմական, քաղաքական և տարածաշրջանային լարվածություններով:

2020 թվականի իրադարձություններին ընդառաջ՝ ՀՀ Կառավարությունը որոշեց ժամանակավոր արգելք կիրառել պաշտոնապես «գոյություն չունեցող» հայ-թուրքական առևտրի նկատմամբ՝ սահմանափակելով թուրքական ծագման ապրանքների ներմուծումը երկիր:

Թեև արգելքն իր բնույթով տնտեսական էր, սակայն առաջնահերթ քաղաքական դրդապատճառներ ուներ՝ հրաժարվել մի երկրի հետ առևտրից, որը սպառազինում է թշնամուն: Հայաստանը Թուրքիայի արտահանման կազմում 1%-ն էլ չի զբաղեցնում, հետևաբար՝ արգելքի հետևանքով թուրքական տնտեսությունը չէր տուժելու: Արգելքն ավելի շատ ազդել էր հայկական շուկայի վրա և հանգեցրել շուկայում որոշակի ապրանքների տեսականու կրճատմանը: Մինչ մանրածախ վաճառողները ապրանքներ էին ձեռք բերում

այլընտրանքային մատակարարներից, որոշ սպառողներ արդեն հայտնում էին իրենց դժգոհությունը այդ փոխարինողների որակից՝ համեմատած թուրքական ապրանքների հետ: Սա հատկապես ազդել է հագուստի, տնային տեքստիլի և վերամշակված սննդի վրա, որտեղ թուրքական ապրանքանիշերն առավել խորն էին ամրապնդված:

Արցախյան հակամարտությունում Թուրքիայի դերի ընկալումը շատ հայերի մեջ խթանեց թուրքական արտադրանքը բոյկոտելու ցանկությունը: Այնուամենայնիվ, քանի որ արգելքը հանգեցրել էր առաջին անհրաժեշտության որոշ ապրանքների գների բարձրացման, կոչ է արվել վերանայելու կամ վերագնահատելու սահմանափակումները՝ ազգային շահերը տնտեսական կարիքների հետ հավասարակշռելու համար:

Արգելքի հետևանքները բազմակողմանի են եղել, մի կողմից՝ այն դրդել է հայկական ձեռնարկություններին բազմազանեցնելու ներմուծման աղբյուրները՝ մասնավորապես այլընտրանքներ փնտրելով այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը, Իրանը և Եվրամիությունը: Մյուս կողմից՝ հայ սպառողներն ու ձեռնարկությունները բախվեցին կարճաժամկետ մարտահրավերների, ինչպիսիք են գների բարձրացումը և թուրքական մատչելի ապրանքների մատակարարման շղթայի հանկարծակի դադարեցումը: Արգելքը նաև հնարավորություն տվեց տեղական արտադրողներին ընդլայնելու արտադրական ծավալները և ամրապնդելու իրենց դիրքերը տեղական շուկայում: Սա ստեղծեց պայմաններ հայկական շուկայի որոշակի ինքնաբավության համար:

Թուրքիայից Հայաստան ներմուծման բիզնեսում ներգրավված տնտեսավարողները, որոնք ժամանակավոր դժվարություններ են ունեցել, ջանք չեն խնայել արգելքի մեղմացման վերաբերյալ գործողությունների իրականացման համար, ինչի արդյունքում արգելքն այլևս չերկարաձգվեց: Մեկ տարվա ընթացքում մի շարք տեղական արտադրողներ բարելավեցին իրենց դիրքերը հայկական շուկայում: Մեկամյա արգելքը թեպետ նկատելիորեն կրճատեց թուրքական արտադրանքի ներկրման ծավալը, սակայն ժամանակը շատ քիչ էր տեղական արտադրության ծավալը մեծացնելու համար: Որպեսզի հայկական արտադրանքը կարողանա մրցակցել թուրքական և առհասարակ ներմուծված արտադրանքի հետ, պետությունն ու բիզնեսը պետք է փոխեն իրենց ռազմավարությունը: Անհրաժեշտ են նոր շուկաներ, նոր տեխնոլոգիական լուծումներ, պետք է փոխել բիզնեսը վարելու մշակույթը և պետություն–բիզնես հարաբերություններում խորքային համագործակցության մեթոդներ կիրառել:

Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների ճեղքվածքը, տարաբնույթ սահմանափակումներն ու արգելքներն ի զորու չեն եղել զսպելու թուրքական ծագման ապրանքների ներմուծման նկատմամբ պահանջարկը, առաջարկվում է առնվազն փորձել հայ-թուրքական առևտրային հարաբերությունները բերել միջազգային իրավական կարգավորման դաշտ՝ բանակցային օրակարգում ընդգրկելով ՀՀ-ի հետ առևտրում ԱՀԿ կանոնների և այլ միջազգային փաստաթղթերի կիրառման հարցը:

Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում ներկրվող թուրքական ծագման ապրանքների որակի և անվտանգության հավաստման առավել վստահելի կանոնակարգերի ներդրումն ու կիրառումը:

Օգտագործված գրականություն

1. Արձանագրություն «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի հավելված 7), https://www.arlis.am/hy/acts/95203
2. Դարբինյան Հ. (2024), Հանրային դիվանագիտության և փափուկ ուժի դրսևորումները հայ-թուրքական հարաբերություններում, *Արևելագիտության հանդես*, 25(1), 216–230, https://doi.org/10.46991/jos.2024.25.1.216
3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 21 կարգադրություն «Անդամ պետություններից մեկի կողմից հատուկ տնտեսական միջոցների միակողմանիորեն կիրառման դեպքում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների փոխգործակցության մասին», https://www.arlis.am/hy/acts/124818
4. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, https://www.e-draft.am/index.php/projects/3328
5. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի 1048-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին», https://www.e-gov.am/gov-decrees/item/36446/
6. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թ. Հոկտեմբերի 20-ի N 1708-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին», https://www.arlis.am/hy/acts/149696
7. Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները. 1918 թվականից մինչև մեր օրերը: Եր., ԵՊՀ հրատ., 2017, 244 էջ, http://lib.ysu.am/disciplines_bk/0cf9923cdba29735b384e21791b44d2e.pdf
8. ՀՀ Կառավարություն (2020, հոկտեմբերի 20). ՀՀ Կառավարությունը որոշում է ընդունել թուրքական ծագման ապրանքների ներմուծման արգելքի մասին, https://www.gov.am/am/news/item/14934/
9. ՀՀ ՎԿ կայքէջ, https://armstat.am
10. ՀՀ ՎԿ տվյալների շտեմարան, https://statbank.armstat.am
11. Պայմանագիր Եվրասիական տնտեսական միության մասին (29.05.2014, Աստանա), https://www.arlis.am/hy/acts/95203
12. Սաֆարյան Դ. (2014), Հայ-թուրքական առևտրատնտեսական կապերը դիվանագիտական հարաբերությունների բացակայության և փակ սահմանների պայմաններում (2001–2011 թթ.), «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (56), 2014, https://cyberleninka.ru/article/n/armenian-turkish-trade-and-economic-ties-under-conditions-of-blockade-and-absence-of-diplomatic-relations-2001-2011/viewer
13. Սուվարյան Յու., Մելքումյան Մ., Նազարյան Գ., Գրիգորյան Կ., Հայաստանի և Թուրքիայի միջև առևտրատնտեսական հարաբերություններ. հնարավոր զարգացումներ և միտումներ, մենագրություն, Եր., «Տնտեսագետ», 2010:

14. Փախլյան Ա., Հայաստան-Թուրքիա առևտրատնտեսական կապերի արդի վիճակը և զարգացման հեռանկարները, *«Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես,* #10-11 (111-112), սեպտեմբեր-հոկտեմբեր, 2009, էջ 28-30:
15. Փախլյան Ա., Աղաջանյան Ս., Վարդանյան Տ. և ուրիշներ (2022), *Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման հնարավորություններն ու մարտահրավերները*, Եր., «Տնտեսագետ» («Ամբերդ» մատենաշար, թիվ 57), https://asue.am/upload/files/amberd/Amberd-57.pdf
16. Accession of the Republic of Armenia, Invocation by the Republic of Turkey of article XIII of the Marrakesh Agreement Establishing the World Trade Organization with respect to the Republic of Armenia,WT/L/501, 3 December 2002 (02-6656), https://docs.wto.org/dol2fe/Pages/SS/directdoc.aspx?filename=Q:/WT/L/501.pdf&Open=True
17. Albaladejo Román A. (2023, September 20). *Ukrainian grain: Understanding the import bans*. European Parliament Think-Tank (Members' Research Service), https://epthinktank.eu/2023/09/20/ukrainian-grain-understanding-the-import-bans/
18. Armenian Center for Socio-Economic Studies (ACSES). (2022), *Թուրքական ապրանքները «վերադառնում են» հայկական շուկա* [Turkish goods are "returning" to the Armenian market]. Retrieved [access date: September 4, 2025], https://www.acses.am/ra-turkey-trade/
19. Cali M. (2015), Trading away from conflict: Using trade to increase resilience in fragile states. Directions in Development – Trade. Washington, DC: World Bank Group, http://documents.worldbank.org/curated/en/475581468330024333
20. Cheterian V. (2023). Open wounds: Armenians, Turks, and a century of genocide (Reprint ed.). Oxford University Press. ISBN 9781787389687
21. Credendo (2023, September 21), *International trade: increasing trade restrictions across the world*. Credendo Knowledge Hub, https://credendo.com/en/knowledge-hub/international-trade-increasing-trade-restrictions-across-world
22. De Waal T. (2018). The Caucasus: An introduction (2nd ed.). Oxford University Press, https://global.oup.com/academic/product/the-caucasus-9780190683092
23. Dokholyan S. V., Makaryan A. R. (2023), Impact assessment of the ban on Turkish imports on the growth of wearing apparel manufacturing in Armenia. Economy of Regions, 19(2), https://www.economyofregions.org/ojs/index.php/er/article/view/770/264
24. Grigoryan A., Khachatryan K., Ter-Matevosyan V. (2018), Armenia-Turkey border opening: What determines the attitude of Armenians? Caucasus Survey. Advance online publication, https://doi.org/10.1080/23761199.2018.1499298
25. Gunter M., Rochtus D. (2010). Special Report: The Turkish-Armenian Rapprochement. Middle East Critique, 19(2), https://doi.org/10.1080/19436149.2010.484532

26. Jrbashyan T., Barseghyan H., Slobodyanyuk V., Shaboyan A. (2007), Study of the economic impact on the Armenian economy from re-opening the Turkish-Armenian borders: Implications for external trade. AEPLAC, http://www.aiprg.net/UserFiles/File/Final%20Papers/Arm-Turk%20border%20articleAEPLAC.pdf
27. Konrad-Adenauer-Stiftung (2025, March 7), *The Armenian-Turkish normalization process: Discussion paper*. Regional Program Political Dialogue South Caucasus, Konrad-Adenauer-Stiftung, https://www.kas.de/documents/269781/269830/The-Armenian-Turkish-Normalization-Process.pdf
28. Polyakov E. (2001, April), Changing trade patterns after conflict resolution in the South Caucasus (Policy Research Working Paper No. 2593). World Bank, https://hdl.handle.net/10986/19673
29. Protocol on the Establishment of Diplomatic Relations between the Republic of Armenia and the Republic of Turkey, Signed in Zurich on October 10, 2009, https://web.archive.org/web/20160305013329/http://www.mfa.am/u_files/20091013_protocol.pdf
30. Tadevosyan R. (2021), Ban on the import of goods of Turkish origin and how we dealt with it. *AMBERD Bulletin*, 6(13), 58–63, https://doi.org/10.52174/2579-2989_2021_6_58
31. Tocci N., The closed Armenia-Turkey border: economic and social effects, including those on the people, and implications for the overall situation in the region. Policy Department External Policies, 2007, http://www.tepsa.eu/download/studies_for_the_european_parliament/briefings-on-turkey/armeniaturkey_border.pdf

АННА ПАХЛЯН
Эксперт-научный сотрудник исследовательского центра «Амберд» АГЭУ,
доцент кафедры делового администрирования,
кандидат экономических наук

АСТГИК НАЗАРЯН
Магистрант кафедры прикладных финансов АГЭУ

ЛИЛИТ ЗЕЙНАЛЯН
Магистрант кафедры прикладных финансов АГЭУ

Импорт товаров турецкого происхождения до и после временного запрета в РА.– Армяно-турецкие торговые отношения формировались под сложным сочетанием политической напряженности, региональных событий и экономических интересов.

Несмотря на отсутствие официальных дипломатических отношений с 1990-х годов, торговля между Арменией и Турцией продолжается при посредничестве соседних стран.

В целях противодействия открытой поддержке Турцией

террористических действий Азербайджана во время 44-дневной Арцахской войны и прекращения её финансовой поддержки государственной казны, правительство Армении решением № 1708-Н от 20 октября 2020 года ввело временный запрет на импорт некоторых товаров турецкого происхождения.

Запрет на импорт, первоначально установленный сроком на шесть месяцев, был в конечном итоге снят после однократного продления, фактически охватив весь 2021 год. Хотя приток товаров турецкого происхождения в Республику Армения сократился на 68,5% в результате применения временного запрета на импорт, объемы импорта восстановились в короткие сроки после его отмены, превысив самые высокие показатели за предыдущие три десятилетия и продемонстрировав непрерывную тенденцию к росту.

В статье рассматривается динамика объемов импорта из Турции в условиях временного запрета как по обобщенным показателям, так и по десяти основным товарным группам, а также проведен PESTEL-анализ влияния временного запрета на товары турецкого происхождения.

Ключевые слова: *армяно-турецкие отношения, внешняя торговля, импорт, товары турецкого происхождения, временный запрет, торговые барьеры.*
JEL: D24, F14
DOI: 10.52174/29538114_2025.2-143

ANNA PAKHLYAN
Expert Researcher at the ASUE "Amberd" Research Center,
Associate Professor of the Chair of Business Administration,
PhD in Economics

ASTGHIK NAZARYAN
Master's student at the Department of Applied Finance, ASUE

LILIT ZEYNALIAN
Master's student at the Department of Applied Finance, ASUE

Imports of Goods of Turkish Origin Before and After the Temporary Ban in the RA.– A complex combination of political tensions, regional developments, and economic interests has shaped Armenia-Turkey trade relations.

Despite the absence of formal diplomatic ties since the 1990s, trade between Armenia and Turkey has been ongoing, facilitated by the mediation of neighboring countries.

To counter Turkey's open support for Azerbaijan's military actions during the 44-day Artsakh war and to stop its financial support to the state treasury, the Armenian government by Decision No. 1708-N of October 20, 2020, imposed a temporary ban on the import of certain goods of Turkish origin.

The import ban, initially set for six months, was lifted after being extended once, effectively covering the entire year of 2021. Although the inflow of goods of Turkish origin into the Republic of Armenia was reduced by 68.5% with the application of the temporary import ban, import volumes recovered in a short time after its cancellation, exceeding the highest indicators of the previous three decades, and with continuous growth trends.

The paper examines the changes in import volumes from Turkey under the temporary ban, both in terms of generalized indicators and across ten major product groups. It also conducts a PESTEL analysis of the effects of the temporary import ban on goods of Turkish origin.

Keywords: *Armenian-Turkish relations, foreign trade, imports, goods of Turkish origin, temporary ban, trade barrier*
JEL: D24, F14
DOI: 10.52174/29538114_2025.2-143